

«ՈՒԵՍՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի
17.01.2012թ. թիվ 1/02ԱԳ-Ա որոշմամբ «Ուեսո» ԱՓԲԸ նկատմամբ կիրառվել է
պատասխանատվության միջոց՝ ապահովագրական ընկերությունների
գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման
համար:

17.01.2012թ.
Երևան

Թիվ 1/02ԱԳ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՈՐՈՇՈՒՄ

ՌԵՍՈՒՆՆԵՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված 2011 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 34/16 արձանագրությամբ և 34/14 արձանագրության 1-ին, 7-րդ, 13-րդ, 19-րդ կետերում նշված խախտումները թույլ տալու համար «ՌԵՍՈՒՆՆԵՐ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված 2011 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 34/20 արձանագրությամբ նշված խախտումները թույլ տալու համար «ՌԵՍՈՒՆՆԵՐ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառել տուգանք՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
3. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված 2011 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 34/21 և 2011 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 34/14 արձանագրություններով (բացառությամբ 1-ին, 7-րդ, 13-րդ, 19-րդ կետերի) նշված խախտումները թույլ տալու համար «ՌԵՍՈՒՆՆԵՐ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառել տուգանք՝ 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
4. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված 2011 թվականի մարտի 25-ի թիվ 34/08, 2011 թվականի հունիսի 14-ի թիվ 34/12 և 2011 թվականի օգոստոսի 19-ի թիվ 34/15 արձանագրություններով նշված խախտումները թույլ տալու համար «ՌԵՍՈՒՆՆԵՐ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ կիրառել նախազգուշացում՝ ապագայում նմանատիպ խախտումներ չկրկնելու հանձնարարականով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԵՍՈՒՆՆԵՐ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն մուտքագրվելու կամ վերջինիս՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:

6. Սույն որոշումն օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել
Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝

ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆ